եայց եկեղեցւոյ և ըստ ընդհանուր սովորութեան ազգիս, և յընթացս երեք ամսոց մի քանի անգամ ցուցակագրելով ժողովրդականաց թիւը, այն եզրակացութեան եկանք, որ ծխաբաժանութիւնը թաղական լինի, և քաղաքը բաժանելով հինգ թաղերի, ամեն մի թաղում բնակուած հայ ժողովորդը յանձնուի ի հովուութիւն մէն մի քահանայի։ Բագուայ այժմեան քահանայիցս թիւը չորս է, իսկ հինգերորդ թաղի հովուութիւնը առ ժամանակ մի յանձնել Ասխաբաթի Մեսրովբ քահանայ Տէր Ոսկանեանցին, որ Ս. Սինոդի թոյլտուութեամբ ժամանակաւորապէս քահանայագործում է Բագուում։ Եւ որովհետեւ չիշեալ հինգ թաղերի հայ ժողովրդականք թէ իրանց թւով և թէ կարողութեամբ հաւասար չեն, այլ նրանց մի քանիսի մէջ ժողովուրդը թէեւ շատ է, բայց նրանց մեծ մասը աղքատ ընտանիքներ են, մի քանիսի մէջ հարուստները շատ են, մէկ թաղում կայ աւելի քան չորս հարիւր տուն, միւսում երկու հարիւր աւելի կամ պակաս ևն, ուստի այս ամէն յարմարութիւնքը վերացնելու ու ծխաբաժանութիւնը որքան հնարաւոր է խղճով ու արդարութեամբ անելու համար՝ թաղերի բաժանումը այն ձեւով կատարեցինք, որ ոչ մէկ քահանայի զրկանք չեղաւ։

Ուստի իւրաքանչիւր ոք իւր յօժար ցանկութեամբ մի թաղ վերցրեց։ Ահա այդ թաղերի սահմանները ու նրանց վերցրած քահանայի անունները։

Առաջին թաղն սկսվում է Կարապետ Լալայեանի անից ծովափում, և Նիկոլայեւսկի փողոցով բարձրանալով միանում է Պարսկական փողոցի հետ (Տէր Խորէնի տան փողոց) և վերջանալով նահանգական դատարանի մօտ Գուբերսկի փողոցով՝ իջնում է դէպի ցած, մինչեւ Ցիցեանովի փողոցը, որոց ձախ կողմից, այսինքն Յակոբ Ադամեանի տնից, սկսելով գնում է Ղուբի հրապարակը, մինչեւ Թաւաքալեանի տունը, Շամախւոյ թաղում, և այդ փողոցի արեւմտեան ծայրով վերջանում։ Այս բոլոր տները, որոյ մէջ մտնում է նաեւ Զանբարաքեանդը, լինում է մէկ ծխական թաղ, որը յօժարակամ ընդունեց Ղեւոնդ քահանայ Տէր Աստուածատրեանց։

Երկրորդ թաղն կազմում է հին քաղաքը իւր շրջապատով,